ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Հարատեւելու միջոցը միայն թրի սուրության մեջ չէ, այլ մտքի սուրության, ոչ միայն բազկի, այլ մտքի զորության, ոչ թե ջարդելու եւ ավերելու, այլ կառուցելու եւ արարելու մեջ: Ես հավատում եմ հայ ժողովրդին, քանզի բոտիմք թափելը նա գերադասում է արյուն թափելուց: Պաշտպանվելը՝ հարձակվելուց: Աշխատելը՝ կողոպտելուց: Գոյատեւելը բնական եւ բանական արդյունքն է այս ամենի, եւ հայ ժողովուրդը կհասնի հեռավոր գալիքին: Ցանկությունս՝ ժողովրդիս անմահությունն է: Նրա անմահությունը նաեւ իմ անմահությունն է: Իսկ իմ գործի անմահությունը՝ նրա անմահությունը: Ների՛ր, ի՛մ ժողովուրդ, եթե մեծամտություն համարես անարժանիս ինքնագնահատականը:

Մկրտիչ Սարգսյան

Գրիգոր Նարեկացու մասին շատերն են գրել՝ իրենց կարողությունների սահմաններում վերլուծելով եւ դրվատելով նրա ոգեղենությունն ու քնարերգությունը, միտքն ու հայացքները: Շատ հեշտ է թվացել մի քանի էջով ընդհանրացնել նախորդների փորձն այս տեսակետից՝ ավելացնել մի քանի աննշան նրբագիծ, որոնք կարող են կապ ունենալ կամ ընդհանրապես չունենալ միջնադարյան հանճարի հետ:

Բանաստեղծ, արձակագիր: ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Արցախի Հանրապետության (ԼՂՀ) պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ Մկրտիչ Սարգսյանն ընթացել է դեպի Գրիգոր Նարեկացին իր ուրույն ուղիով, փորձելով ներկայացնել նրան ոչ թե որպես մեր կյանքից եւ իրականությունից շատ ու շատ հեռու, Երկնքից իջած մի հրեշտակ, այլ որպես իրական հայ մարդ, Աստծու հանճարով եւ մանավանդ հայրենասիրությամբ օժտված, ազգասեր ու եկեղեցասեր, որ Արարչի կամոք լույս աշխարհ է եկել Հայոց պատմության մի հերթական բախտորոշ

պահի՝ հայտնվելով կենսական խաչմերուկում՝ առանց որեւէ ուղեվարի եւ պատրաստի շնորհված ուղեցույցի եւ այնպիսի մի պահի, երբ օրն ու դարաշրջանն ինքնին խրթին են՝ քաղաքական-հասարակական, բարոյա-հոգեբանական առումներով։ Խոսքը Գրիգոր Նարեկացի երկի մասին է, որ առաջին անգամ հրատարակվել է 1989 թվականին՝ ազգային մեծ զարթոնքի ժամանակ[1], իսկ երկրորդ լրամշակված հրատարակությունն իրականացրել է «Հայաստան» հրատարակչությունը[2]։

«Գրիգոր Նարեկացին» գեղարվեստական ստեղծագործություն է, պատմավեպ, որ վստահաբար երկարամյա մտորումների եւ որոնումների արդյունքում է ի հայտ եկել։ Կարելի է միայն պատկերացնել, որ գործը ձեռնարկելիս եւ ստեղծագործական բուն երկունքի ընթացքին Մկրտիչ Սարգսյանը մշտապես պետք է մտազբաղ լիներ մի շարք խնդիրների լուծմամբ, որոնցից մեր կարծիքով առաջնային են պատմական եւ գաղափարական հանգամանքների ճիշտ մեկնաբանությունը եւ Նարեկացու կերպարի հոգեբանական համոզիչ բնութագծերով մարմնավորումը, որ ինչպես կարելի է համոզվել գրքի առաջին իսկ էջերից հիրավի եւ իրապես հաջողվել է՝ բառի լիակատար եւ համապարփակ իմաստներով։

Անշուշտ գաղափարական եւ պատմական մոտեցումները, կարծես թե, առանձնակի դժվարությունների հետ չպետք է կապված լինեն, քանի որ այդ մասին, ինչպես նշեցինք, գրել են ու գրում են շատերը։ Մինչդեռ Մ. Սարգսյանի խնդիրն է՝ գեղարվեստական երկով վրձնել «ամբողջական» Նարեկացուն, վեր կանգնելով նախկին գրականագիտական պատկերացումներից եւ կաղապարներից։ Այսպիսով՝ հեղինակը պետք է հայտնաբերեր նոր Նարեկացուն, «մարդեղացած», ավելի մեծ եւ առավել հանճարեղ։

Գրիգոր Նարեկացու կերպարը պատմավեպում ձեւավորվում է հրթացս ժամանակի, պատանեկությունից մինչեւ հասունություն, դարաշրջանի արյունոտ հակամարտության մեջ արդարություն որոնելով եւ մշտապես կասկածելով իր ճշմարտացիությանն ու համոզմունքներին։ Մկրտիչ Սարգսյանը վկայում է, որ այլ կերպ լինել չէր կարող։ Գրիգորն իր հոգեւոր կյանքի արդեն իսկ առաջին քայլերի ընթացքում ականատես լինելով զգում է ե՛ւ թոնդրակյանների, ե՛ւ եկեղեցու անզիջում հա-

---

[1] *Երեւան, «Արեւիկ» հրատ., 384 էջ։*

[2] *Երեւան, 2025, 520 էջ։*

կադրությունն ու անպաշտպան հայ մարդու, շինականի ողբերգությունը («Կղզում»), եւ ինքը չի կողմնորոշվում, թե ո՞ւմ կողմը լինել. «Գրիգորը դողում էր ամբողջ մարմնով։ Սփրթնել էր, շրթունքները դողդողում էին, չգիտեր՝ ուր գնալ, ինչպես պոկել հայացքը լողացող աղջկանից, որ նետի նման ճեղքում էր է ալիքները։ Գրիգորը չէր ցանկանում աղջկա մահը»։ Իսկ ուսուցիչը, Անանիա Նարեկացին, ուղիղ հակառակ կարծիքի էր. կաքավողները պետք է վթարվեն։

Նարեկացին հասունանում է կրթվելով։ (Հեղինակը սրանով կարծես ընդգծում է կրթության դերը բոլոր ժամանակների համար)։ Ավարտելով Նարեկա միաբանության կրթարանը, Գրիգորը գալիս է Անի։ Այդ շրջանում տաղերգուի համբավն արդեն լայն տարածում էր գտել Հայոց աշխարհում. «Նրա տաղերն ու գանձերը նվաճում էին երկրի վանքերը, եկեղեցիները, ուսումնական կենտրոնները՝ զարդարելով արարողություններն ու ծիսակատարությունները» («Դեպի Անի»)։

Վեպի հաջորդ գլուխներում Գրիգորի ներքին ալեկոծությունն ավելի է խորանում։ Հեղինակը բացում, լուսաբանում է մարդու եւ պատմական ժամանակի անմիջական կապը, ժամանակի արտացոլումը մարդու գիտակցության մեջ։ Բացառիկ տաղանդի տեր հոգեւորական բանաստեղծը չի կարողանում հանդուրժել ու լռել, համակերպվել երկրում տիրող տարերային իրավիճակին, երբ թիրախավորված է մարդը, անհատը եւ ահա հայտնվում է նա՝ հոգեւոր ծանր ապրումների եւ անվերջ երկվության ու տվայտանքի մեջ, որի գրառված ապոթեոզը հասել է մեզ «Ողբերգության մատյանով»։ Վիպական գործողությունների ծավալման ընթացքում զգացվում է, որ Մ. Սարգսյանը եւս երկվության մեջ է, քանզի հակադիր կողմերում կանգնած են հայ մարդիկ՝ դոգմատիկ մտքերով լի. «Սպանել Աստծու թշնամիներին,— ձայնը հրեշավոր բարձր էր եւ լսվեց եկեղեցու զանգակատնից» («Դեպի Անի»)։ Այստեղ է, որ «սպանելը» բնութագրելով որպես հրեշավոր ձայն, Մ. Սարգսյանը նույնպես սկսում է կասկածել ու երկմտել։

Նարեկացին առաջինն էր, որ պոռթկաց եւ ի խորոց սրտի զրուցեց Արարչի հետ, բացելով իր ինչպես եւ մեր հոգու եւ էության բոլոր ծալքերը, այլեւս չթողնելով մութ եւ խավար անկյուններ։ Մկրտիչ Սարգսյանի Նարեկացին որոնումների մեջ է, սակայն նա ոչ թե խարխափում է խավարում, կամ կասկածում Աստծու զորության եւ դրա ի հայտ գալու հանգամանքին, այլ նա ասես տեսնում է դարերի կյանքն ու ընթացքը, մարդ-

կային միտքն ու սլացքը։ Նա չի ընդվզում, չի դժգոհում, չի բողոքում, չնայած կյանքը դրա համար բազում պատճառներ ու առիթներ է ընձեռում։ Մկրտիչ Սարգսյանի Նարեկացին Աստծու միջոցով փնտրում է ելքը՝ իր, ժողովրդի եւ համայն մարդկության համար։ «Շինականի հայացքն առավ քիչ անդին կանգնած կնոջ վրա։ «Փախչելու միտք ունի», - փայլատակեց Գրիգորի մտքում։ Շինականը հանկարծ հետ ոստնեց, մեջքով բախվեց Գրիգորին, գլորեց նրան, ոստյունով հասավ կնոջն ու, փետուրի նման թռցնելով, վազեց դեպի մարդաշատ փողոցը» («Անիում»)։

Մտածողի խնդիրն է գտնել այն ուղին, որը տանում է իմաստության եւ տգիտության, խաղաղության եւ պատերազմի, բարու եւ չարի, բռնապետության եւ ազատության, հաջողության եւ անհաջողության հավասարակշռման։ Սա առաջին հերթին հավասարակշռություն է մարդու եւ հասարակության միջեւ, իսկ երբ վերջինս կախված է մարդկանց քմահաճույքից եւ նրանց գաղափարի մակարդակից, միակ հույսը մնում է Աստծու մեծահոգությունը։ Այս իրավիճակն անփոփոխ է՝ սկսած մարդկության պատմության արշալույսից մինչ այսօր։ Պատահական չէ, որ Նարեկա վանքում հաստատվածները դժգոհությամբ են ընդունում Գրիգորի վերադարձը («Սիրո վախճանը», «Ներվանական վայրիվերումներ»)։ Տաղանդավոր անհատը մերժված է միջակության կողմից, առավել եւս նրանց, որ ապաշնորհ են։ Պատկերացրե՛ք հանճարի վիճակը։ Այս օրինաչափությունը, ինչպես նշեցինք, հավերժական է բոլոր ժողովուրդների եւ ժամանակների համար։ Կարելի է արդյոք պատկերացնել, թե ի՞նչ վիճակի են հասցրել Ռուսաստանում մեծն Լեւ Տոլստոյին, որ նա հեռացել է հարազատ ակութից։ Ի՞նչ նախանձով են գործընկեր գիտնականներն ընդունել Մարիա Սկլադովսկայա-Կյուրիի երկրորդ Նոբելյան մրցանակը, ի՞նչ խայտառակ ներկայացում են սարքել նրա դեմ, որ նա չի կարողացել այդ օրերին նույնիսկ փողոց դուրս գալ։ Հեռու չգնանք. Կոմիտաս, Չարենց ...

Ըստ Սարգսյանի Նարեկացու մարդասիրական ոչ մի ձեռնարկ չի կարող հաջողությամբ պսակվել, քանի դեռ չարը, ստորն ու նվաստն են իշխող, ուստի երազանքի հասարակությունն ընդամենը ցնորք է, պատրանք («Զախողված առաքելություն»)։ Սակայն միանշանակ է նաեւ, որ չարի իշխանությունն անսահմանափակ չէ։ Իր մութ ու խավար գործերը բազում են, բայց այդ ամենը կարող է հաղթահարել միայն սերը՝ ջինջ, անարատ ու պայծառ։

Ավելի քան ուշագրավ է Մկրտիչ Սարգսյանի ոճական վարպետությունը։ Վեպում բազմաթիվ են նորաբանությունները, որոնք ամբողջությամբ ներհյուսված են հայ գրական լեզվի կանոններին։ Խոսքին մի առանձին փայլ են հաղորդում գրաբարյան, բարբառային եւ հնացած ձեւերի կիրառությունները, որ ամենեւին չեն կաշկանդում, այլ ազատ ընթացք են տալիս պատումին։ Մ. Սարգսյանն ստեղծում է բնության եւ իրավիճակի այնպիսի պատկերներ, կարծես, դրանք իրականության մեջ էանում են աչքերիդ առաջ։ Ահա այն խուցի նկարագրությունը, որտեղ Նարեկացու առջեւ հառնում է թոնդրակյանների առաջնորդ Սմբատ Զարեհավանցու ուրվականը. «Մոմի լույսը մի փոքրիկ տարածք էր խլել մագաղաթից։ Լույսն այնքան թույլ էր ու դողդոջուն, որ մարդու շնչից անգամ քիչ էր մնում հանգչեր։ Տարուբերվում էր կրակի լեզուն՝ տարուբերվելով պատից պատ եւ հատակից առաստաղ նետելով քնարերգուի ստվերը» («Երկխոսություն Գրիգոր Նարեկացու եւ Սմբատ Զարեհավանցու միջեւ»)։

Նարեկավանքի նկարագրությունն ընթերցողի երեւակայության մեջ վերակերտում է պատմական հնավայրը այնպես, կարծես Ժ. դարից անխաթար հասել է մեր օրերը։ Թերթելով վեպի էջերը, թվում է, դիտում ես գունագեղ շարժանկար, որն այնքան իրական է, որ ուզում ես մեկնել ձեռքդ ու շոշափել, կամ մի քայլ անել ու հայտնվել հազար տարի առաջվա Հայաստանում, որն ավելի մեծ էր ու հզոր եւ զարգանում էր Վերածնության արմատներ գցելով։ Ահա Վանա ծովի «տեսիլքը». «Լիճը լիզում էր ափերը. Ալիքները թեթեւ շպպոցով փշրվում էին գլաքարերին ու ավազին, ապա նահանջում՝ դիպչելով ափերի կոշտությանն ու փշաքաղված, սովոր խշշոցով նորից ափակոծում» («Կղզում»)։ Պանթեի՞զմ է, թե խորհրդապաշտություն։ Մեր կարծիքով՝ երկուսը միասին, պարզապես մեծ արվեստագետի վարպետություն է։

Հեղինակը հասնում է նման արդյունքի, մանրամասն գրի առնելով այն, ինչ կարեւոր է, եւ ընթերցողին կլանում է Մ. Սարգսյանի գրական աշխարհի ծավալը, մոռացության մատնելով, որ այն գեղարվեստական աշխարհ է, որն ստեղծված է գրողի մտահորիզոնով՝ մեծ Նարեկացու հանճարի կենսական ակունքները բացահայտելու համար։

Աննկարագրելի «կենդանի» են ներկայացված վեպի հերոսները։ Իհարկե, հիմնական ուշադրությունը միտված է Նարեկացուն՝ նրա հոգեւոր աճին, սակայն եթե «ընթերցենք» բոլոր հերոսներին առանձին-առանձին, նրանք ուրվագծվում են Նարեկացու մեծությունն ընդգծելու

համար, որպես ինքնուրույն կերպարներ, կենդանի մարդիկ, որոնք կարող էին ապրել տասներորդ դարում այնպես, ինչպես մեր օրերում։ Այս առումով Մ. Սարգսյանի ոճը մոտենում է Հովհ. Թումանյանի պատմվածքների ոճին. մարդն ապրում է որպես մարդ, եւ չի կարող ամբողջությամբ դրական, կամ ամբողջությամբ բացասական հատկանիշներ ունենալ, ինչը բնորոշ է ռեալիզմի մեծ վարպետների ստեղծագործություններին։

Հատուկ ուշադրության են արժանի վիպական հյուսվածքում հազվադեպ կամ նույնիսկ մեկ անգամ հայտնվող հերոսները (երկրորդական հերոսներ)։ «Ներվանական վայրիվերումներ» գլխում վանք են ներխուժում շինականները։ Շինականը եկավ ու գնաց։ Մի ակնթարթ, բայց մենք տեսնում ենք մարդկային բնավորություններ, խառնվածքներ, որոնք այնուհետեւ գտնվելով վարագույրի հետեւում, ըստ էության, ներկայացնում են հայ ժողովրդին, որոշակի հանրային խավեր՝ կրելով դրանց «դարերի բեռը»։

«Իսկական երկրային կյանքը,— գրում է Ն. Ֆյոդորովը,— ընդլայնվելու է մինչեւ բնության սահմանները, իր մեջ կլանելով մեր ազատության բացակայությունը, մեր միջոցով էլ վերածվելու է ազատ, անմահ անձնավորությունների աշխարհի»՝ Գրիգոր Նարեկացու հոգեւոր եւ Մկրտիչ Սարգսյանի գեղարվեստական աշխարհների։

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՆՁԱՑՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր